

Արձանագրություն № 5

2022 թվականի ապրիլի 4-ին կայացավ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ 2021-2022 ուսումնական տարվա արտահերթ համադպրոցական ծնողական ժողով՝ նախագահությամբ ծնող կոմիտեի նախագահ Պ. Բեզլարյանի քարտուղարությամբ՝ Դ. Մնացականյանի:

Նիստին մասնակցում էին 105 ծնող: Նիստին ներկա էր նաև տնօրենի թեկնածու Ա. Ղումաշյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ.

1. Հաստատության տնօրենի թափուր տեղի հավակնորդ Ա. Ղումաշյանի ներկայացրած զարգացման ծրագրի քննարկում և քվեարկություն:
Զեկուցող՝ ծնողխորհրդի նախագահ Պ. Բեզլարյան:

Լսեցին- 1. Հաստատության ծնողխորհրդի նախագահ՝ Պ. Բեզլարյանի ելույթը, ով իր զեկույցում հանգամանորեն ներկայացրեց դպրոցի տնօրենի թեկնածու Ա. Ղումաշյանի ներկայացրած զարգացման ծրագիրը: Պ. Բեզլարյանը մանրամասնորեն ներկայացրեց ծրագրում ընդգրկված խնդիրներն ու հիմնախնդիրները:

Ծրագրի ներկայացումից հետո տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին ծնողխորհրդի 24 անդամներից 23-ը:

Քվեարկության ավարտից հետո ամփոփվեցին արդյունքները՝ 23 կողմ, 0 դեմ:

Լսելով զեկույցը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ ծնողական

խորհուրդը որոշեց

1. Հավանություն տալ հաստատության տնօրենի թափուր տեղի հավակնորդ Ա. Ղումաշյանի ներկայացրած դպրոցի զարգացման ծրագրին:
2. Ա. Ղումաշյանին համարել հաստատության տնօրենի՝ ծնողական խորհրդի թեկնածու:

Նախագահ՝

Պ. Բեզլարյան

Քարտուղար՝

Դ. Մնացականյան